




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0)** license.

Դու կարող ես.

սրահանել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով  
մեջբերել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





1-2  
ՀՐԱՏ. «ՍԱՐՈ-ՄԱՐՈ» — ԹԻՖԼԻՍ

Պրոլետարիներ բոլոր երկրների միացե՛ք

Ե. ՍՈՒՐԵՆ

# ԿԱՐՄԻՐ ՀԱՂՊԱՏԸ

(1903—1923)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

1923

---

Изд. „САРО-МАРО„ Тифлис

пролетарий всех стран, соединяйтесь!

Е. СУРЕН


КРАСНЫЙ АХПАТ

(1903—1923)

Тифлис

1923







9(47.925).52



ՀՐԱՏ. «ՍԱՐՈ-ՄԱՐՈ» — ԹԻՖԼԻՍ

«Գեղեցաբնիկը բոլոր երկրները միացրեց»

Ե. ՍՈՒՐԵՆ

3кп/1(47.925)

U-97

# ԿԱՐՄԻՐ ՀԱՂՊԱՏԸ

(1903—1923)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Գ Ր Ա Ղ Ր Ա Ն

ԳԵՈՐԳ ՍԵԼԻԲ-ՍԱՐԳՍԻԱՆ

1923

Изд. „САРՈ-МАՐՈ“ Тифлис

пролетарий всех стран, соединяйтесь!

Е. СУРЕН

# КРАСНЫЙ АХПАТ

(1903—1923)

Тифлис

1923



A 57253



Արձանագրված է «ՄԱՐՏԱԿԱՆՈՉԻ» № 59-ից

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Главлит №

Тифлис.

Тираж 600 экз.

5րդ տպարան ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. Բաժ. Լենինի փողոց № 3

1923



ՆՎԷՐ ՀԱՂՊԱՏԻ

ԸՆԿԵՐՆԵՐԻՆ







## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկա գրքույկում անփոփոխ արտատպված է Հաղպարի արիւնոտ անցքերի 20-ամեակի առթիւ «Մարտահոշում» զետեղված—Հայ գիւղացութեան հեղափոխական կռւիւմի փայլուն եջ հողվածաւ:

Գրված է նա չափազանց հապճեպ, վորպէս լրագրական հողված է ի նկատի է առնված մեր թերթի սուղ էջերը, վորոնք պատմական նիւթերին չեն կարող ավելի տեղ տալ: Մինչդեռ այս նիւթը—չափազանց հարուստ ու հետաքրքիր—արժանի է լուրջ ուսումնասիրութեան, պահանջում է շատ ավելի ժամանակ՝ քան մի-երկու ժամ, վոր տրամադրել եմ ես հիշողութիւններս արձանագրելով:

Հեղափոխական անցքերի սոսկ հիշողութիւնների վրա հիմնված վերարտադրումը, մանավանդ երբ վերայով անցել է ամբողջ երկու տասնեակ տարի—համարում ենք անբավարար, վորքան էլ մենք վստահ լինենք մեր հիշողութեան ույժի և թարմութեան վրա:

Ընթացիք աշխատանքերը դժբախտաբար ինձ ժամանակ չեն թողնում Հաղպարի 1903 թվի արիւնոտ դեպքերի ուսումնասիրութեանը նվիրել հարկավոր ուշադրութիւնը: Եվ ես վոչ միայն չեմ փորձել աչքի անցնել Թիֆլիսի նախկին Նահանգական Դատարանի արխիւներում անշուտ պահվող Հաղպատի ագրարային խրառմաներին վերաբերեալ գործը, այլ գոնէ հարցաքննելու մեր գիւղի այն բազմաթիւ կենդանի վկաներին, վորոնք այդ արիւնոտ կռւիւմի անմիջական դերակատարներն են եղել:

Հիշողութեանս վրա հենվելով շտապեցի գրի առ-



նել այսքանը, վորովհետեւ ուզում էի սլարաքս կա-  
տարած լինել Հաղպատի կոմմունիստ ընկերների հան-  
դեպ, վորոնք մի քանի անգամ հիշեցրել էին իրենց  
շատ հասկանալի ու բնական ցանկութեան մասին—  
պատմութեան փոշու տակից հանել հայ գիւղացու-  
թեան այդ խակապես հերոսական ու եղակի ըմբոստա-  
ցումի պատմութիւնը՝ գոնէ նրա քառամեակի օրերին:

Առանձնապես ցավում եմ, վոր մեր թերթի սուղ  
էջերը թույլ չըտվին ինձ գէթ ընդհանուր գծերով կանգ  
առնելու մասնավորապես նախկին Բորչալուի գավառի  
(վորի մի մասն էր կազմում Լօռին մինչեւ անդրկով-  
կասեան մանրապետութիւնների ստեղծվելը) հողային  
սեփականատիրութեան էվոլյուցիայի վրա:

Խնդիրը նրանումն է, վոր 90-ական թվականների  
վերջերից և 900-ական թվականների սկզբից կապի-  
տալը աստիճանաբար իր թաթն է տարածում գիւղի  
վրա և այնտեղից նկատելի կերպով դուրս վռնդում  
հին միջնադարեան ավատական սեփականատիրական  
տրադիցիաները: Այսպես, այդ ժամանակներին նավ-  
թային առաջնակարգ կրեստներ—վորպիսիքն էին  
Մանթաշեան, Արամեան և այլն—սկսում են արագ  
տէմպով հողային խոշոր տարածութիւններ ձեռք ձգել  
Բորչալվում (Արամեանը մի տարում գնում է արդեն  
իր հետեւեալ կալվածքները՝ Լաղրադինը—400 հաղա-  
րով, Հաղպատը 400 հաղարից ավելի, Ախտալան—երեք  
կալվածքը կլանում է մոտ մի միլիոն ուլրի), ձգել  
օրինակելի այգիներ՝ արտասահմանեան լավագույն  
տեսակի մրգի ծառերով, մուծել գիւղատնտեսական  
կատարելագործված մեքենաներ, շինել էլեքտրական  
ջրաղացներ, կառուցել հիմնավոր շէնքեր և այլն:

Նավթային կրեստներին հետևում են ավելի հա-  
մեատները: Եվ եթե ուշադրութեամբ դիտելու լինենք,  
կը տեսնենք վոր կապիտալը ձգտում է թիֆլիսի ար-  
վարձան Նավթլուից բռնած դեպի Լոռի տանող երկա-  
թուղու գծի աջ ու ձախ զանազան բեղական և կնիազա-  
կան արժեքավոր հողերը իր ձեռքը ձգել: Նույնիսկ հա-  
տուկ Ռազիկդ Ծուրիկովկա է ստեղծվում կապիտալի  
ներս թափանցման և շահագործման հարմարութիւննե-



րի համար: Այդ պրոցեսը շատ ավելի մեծ թափ կը-  
ստանար, եթե վրա չըհասնէր 1905 թվի հեղափոխու-  
թիւնը:

Ծավալելով իր ուշժը գիւղի վրա և այնտեղից  
վանելով թավադական-աղալարական միջնադարեան  
արխայիկ տնտեսութեան և փոխհարաբերութեան կար-  
գերը, կապիտալը ջարդում-փշրում է այն բոլոր խոչըն-  
դոտները վորոնք ծառանում էին նրա առաջ Բորչա-  
լում: Գիւղացիական մասնավոր հողատիրութիւնը նը-  
րան բնավ չի անհանգստացնում, վորովհետև նրա դեմ  
մրցելը դժվար չէր խոշոր կապիտալին: Փոխարի-  
նելով գիւղում իշխանին կամ աղալարին՝ նա չէր ու-  
ղում հաշտվել շահագործող կալվածատերի և շահագործ-  
ված գիւղացու հին հողային փոխ-հարաբերութիւնների  
հետ, երբ անհպարտութիւնը հենվելով իր նադելային-  
համայնական իրավունքի վրա՝ սահմանափակում էր հո-  
ղային սեփականութեան իրավունքի բացառականութիւնը  
և կաշկանդում ու դժվարացնում կապիտալիստական  
շահագործումի կատարեալ աղատութիւնը: Թվում  
է, թե տնտեսական էվոլյուցիայի այդ անխուսափելի  
պրոցեսում Բորչալու-Հոռվում նույնչափ անխուսափելի  
էին Հաղպատի արիւնալի անցքերի նման ագրարային  
տարերային բռնկումներ:

Խնդրի այս կողմը — կապիտալի ներս խուժումը  
դեպի գիւղ — թեև բոլորովին չի մոռացված թուլցիկ  
հողավածիս մեջ, բայց բավական ուղիւնք կերպով չի  
շոշափված: Մինչդեռ նա շատ կարևոր նշանակութիւն  
ունի ագրարային շարժման ճիշտ պատկերացման ու  
գնահատման համար:

Բայց — կրկնում ենք — ուսումնասիրութիւն չէ,  
վոր փորձել եմ տալ, այլ անձնական թուլցիկ հի-  
շողութիւններ, վորոնց նպատակն է եղել վերհիշել հայ  
աշխատավոր գիւղացիութեան անցեալ շահագործումի ու  
բմբռնումի այդ ցայտուն պատկերը:







# ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒԹԵԱՆ

ՆԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՎԷՒ

ՄԻ ՓԱՅԼՈՒՆ ԷՋ

Հոռին իրավամբ համարվել է Անդրկովկասի մեծնից բոլշևիկ գիւղացիական անկիւնը: Իսկ այդ կարմիր գավառի բոլշևիզմի ցիտադելը—վորտեղ մեծից մինչև փոքրը, կին թե տղամարդ, տասնեակ տարիներ ֆանատիկ հետեւորդներ են եղել սոցիալիստական ուսմունքին—եղել է Հոռվա սարերի գեղեցիկ լանջերից մեկի վրա, հազարամեա «Սուրբ Նշան» կոչված վանքի շուրջը փռված Հաղպատ գիւղը:

Գտնվելով Ալլահվերդի գործարանից միայն մի քանի վերստ հեռավորութեան վրա և շատ մոտից շրջվելով ֆրանսիական կապիտալի շահագործման և բանվոր դասակարգի իդեալների հետ, դեռ նախքան քսաներորդ դարը թեւակոխելը, Հաղպատի կրկնակի ու եռակի—ցարիզմից, իշխանից, վանքից կեղեքված գիւղացին իր կաշվի վրա փորձած ունէր շահագործված դասակարգի բոլոր դառնութիւնները: Սոցիալիզմի դադափարներն այստեղ հասկանալի դառնալու համար առանձին ջանքեր չէին պահանջվում: Գիւղացին տեսնում էր, վոր իր արիւն-քրտինքն ամբողջապես մըղվում է մի շվայտ իշխանի, մի պորտաբույծ վարդապետի—ցարական կարգերի այդ հալատարիւմ ծառաներին կերակրելու համար:

Հաղպատ գիւղն ունի ութն հազարից ավելի դեպեատին տարածութիւն, վորի մոտ ութն հազարը այն ժամանակները պատկանում էր իշխան Բարաթովին, միքանի հարիւր դեպեատինի չափ՝ վանքին և միքանի տասնեակ դեպեատին վարելահող էլ Երզնկեաններին, վորոնք չնորհիվ եփրեմ վարդապետ Երզնկեանի 400



ռուբլի վոսկու (վոր անշուշտ գանձանակից տնտեսած  
գումարներ չէին միայն) 50-ական թվականներին ա-  
զատվել էին ձորաութիւնից և ձեռք բերել սեփական  
մի կտոր հող: Տնտեսական այս հանգամանքն իր կնի-  
քն էր դրել վերջիններիս վրա և Երզնկեանները—կալ-  
վածատեր իշխան Բարաթովի համար քահրաւ, տուրք  
ժողովող գիւղացի Գիքո Էվոյեանի և գիւղի հայտնի  
պաշտօնի Չորանանց Մարգարի ընտանիքների հետ—  
կաղմում էին Հաղպատի կուլակ տարրը:

Գիւղացիների խոշորագույն մասը վարում էր իշ-  
խանին պատկանող նստել և վոչ-նաղել հողերը՝ սա-  
րում, ձորում, գիւղի շրջակայքում. իսկ փոքր մասը  
շահագործվում էր վանքի կողմից: Բացի չորս/ց-մեկը,  
վոր բերքի վերջը ժողովում էին մովրսովն (կառավարի  
չը) ու քահրաւչի հայտնի Գիքոն կամ Մարգարը, իշխանը  
ստանում էր Հաղպատի գիւղացիներից նաև մի վորո-  
շեալ տուրք, ֆիքս-գումար, վորի մեծութիւնը 1000—  
3.000 ռուբլի էր տարեկան, նայած իշխան Բարաթովի  
տրամադրութեան—արդեոք տարե՞լ թե տարվել է թըղ-  
թախաղում...

Վանքը ետ չէր մնում ազնվականից. նրա մառան-  
ները լիքն էին վարդապետին ու նրա ընտանիքներին  
(վարդապետները սովորաբար չեն բավականանում հա-  
վատացեալների հաշվին միայն մեկ ընտանիք պահելով)  
վայել ամեն կարգի մթերքներով—գոմքոր ցորեն, մեղ-  
րի հացեր, իւղ ու կարագ, սեփական ձիթահանքում  
քաշած իր անուշութեամբ իւղի հետ մրցող Աջրա կըտ-  
վահատից ձեթ, չորացած միրգ—հոն, չիր, կակալ,  
թխիլ, ամեն տեսակ թըթու դրված բանջարեղեն՝ շուշա-  
նից մինչև դըտիտեռը և այլն և այլն: Պատվավոր տեղ  
էին գրավում «Սուրբ Նշանի» վանահոր մառանում ա-  
նուշ գինին և մանավանդ «Պիղատոսի արտասուքը»—  
արաղը, վորի շատ տեսակները՝ ճաճինը, հացինը, հո-  
նինը, դամբլինը և այլն—հարկավոր ժամանակ մրցու-  
թեան էին հանվում: Մի խոսքով երկնային բարիքների  
բարողիչ վանահայրը տրամադրում էր երկրային վայելք-  
ների անհրաժեշտ բոլոր մարմնական հաճույքներ: Հաս-  
կանալի է, թե ինչու ռանչալարութիւնն այդ պատմա-



կան վանքերի պորտաբույժ բնակիչներին միշտ էլ համարել է անբարոյականութեան ու վարակիչ ախտերի—սիֆիլիսի և այլն—կենդանի տարածողներ։

Պետք է ընդգծել, վոր Հաղպատ գիւղը վորքան հարուստ է արոտատեղիներով (Լոռում ամենից հարուստը), այնքան նա աղքատ է վարելահողի կողմից։ Վնչ միայն նրա վարելահողերը հացի մշակութեան համար արդիւնավետ չեն, այլև այնքան քիչ, վոր հաղպատեցին մինչև օրս էլ կովում է անտառների հետ, վոչնչացնում դարավոր ծառերը և փտեցնում, վորպեսզի, ինչպես ասում է, «հող բաց անի»։ Այն ութն հազար դեսիատինի մեջ հազիվ մի հազար օրսովար «ցանելարան» տարածութիւն գտնվի։ Բայց այդ սքանչելի ու լայնատարած արոտատեղերի շնորհիվ գիւղի անասունները, տավարը բնական կերպով կարանտինի են ենթարկվում և Հաղպատը չգիտէ ազարի վտանգը։ Երբ ժանտախտը գալիս է Շնողնա կողմից, նա քշում է իր տավարը տրամագծորեն հակառակ կողմը, եթե վոռնակի սարերից՝ տանում է միւս կամ երրորդ կողմը և այսպես հեռու պահում վարակից։

Սակավահողութիւնը մի կողմից, իշխանական մովրավների ու բահրա հավաքողների ավազակութիւնն ու թալանը միւս կողմից, ցարական հարկերի ծանրութիւնը երրորդ—միայն ըմբոստութեան ճանապարհ էին բաց անում Հաղպատի գիւղացութեան առաջ։ Եվ անհանգիստ վոգին շատ վաղուց արդեն ապրում էր նրա մեջ։ Նա հիշում էր, թե ինչպես դեռ 30-ական թվականներին իրենց հայրերը փորձեցին սրի անցկացնել իշխանի ամբողջ ընտանիքը և կոտորեցին նրա անդամներից շատերին՝ իշխանական անարգումներից ազատվելու համար։

Գիւղացութեան դրութիւնը առանձնապես ծանրացավ 900-ական թվականներին։ Բարաթովները, սանահնեցի իշխ. Արղութեանների ճետերի հետ միասին, սիրում էին Մոնտե-Կարլոյի կազինոյից դիտել Միջերկրականի գեղածիծաղ ալիքները և փորձել իրենց բաղդը ուղեւորի վրա... Արժան չէր նստում Հաղպատին իշխան Բարաթովի այդ շռայլութիւնը։ Կալվածատեր



պարօնը ստիպված է ծախել «իր պապենական կալվածքը»: Գնող գտնվում է հանձին նավթարդիւնաբերող Միք. Արամեանցի: Բայց նախապես պայման էր դրվում իշխանին բոլոր նաղելները մի անկիւն ժողովել. թեկուզ նաղելներից էլ մի փոքր ավելի հող հատկացնել գիւղացիներին, բայց ամեն կերպ աշխատել սարի, գիւղի, ձորի նաղելները միացնել և միասնադադ տարածութեան վերածել կամ գիւղում, կամ սարում:

Գիւղացիները վնչ մի կերպ տրամադրութիւն չէին ցույց տալիս օգտվելու իշխանի «առատաձեռնութիւնից»: Խնդիրը նրանումն էր, վոր գիւղացիները շատ լավ հասկանում էին կալվածատիրոջ նպատակները: Եթէ հաջողէր վերջինիս իշխանական կալվածքի ամբողջ տարածութեան վրա ցրված նաղելները մի տեղ ժողովել, ապա շատ հեշտութեամբ, մի քանի ստրաժնիկների օգնութեամբ նա կարող էր փակել գիւղացիներին այդ վորոշված տարածութեան վրա և թույլ չտալ առանց կրկնակի տուրքի ու իրավունքի տեղից շարժվելու ուրիշ ուղղութեամբ: Մինչդեռ ստեղծված նույնիսկ անտանելի պայմաններում, ցրված նաղելները հնարավորութիւն էին տալիս գիւղացիներին գոնե կոնտրաբանդ կերպով օգտվելու առանց վճարի շատ բանից. օրինակ մի տեղից միւս տեղ տեղափոխվելիս կերակրել իրենց տավարը իշխանի դորուղում և այլն: Մովրոմն ու նրա ստրաժնիկներն անգոր էին այս դեպքում: Այդ պայմաններում իշխանին դժվար էր գտնել գիւղից դուրս մարդիկ, վորոնք համաձայնէին կապալով վերցնել բաժան-բաժան եղած հողամասերը:

Շահագործող իշխանի և շահագործված գիւղացիների շահերը համաձայնեցնել անկարելի էր և նրանց փոխհարաբերութիւնները ծայր աստիճան սրվեցին: Զայրացած գիւղացիների համառութեան վրա, Բարաթոմն հին պայմաններում մերժում է նաղելից դուրս մի թիղ անգամ հող տալ հաղպատեցիներին և դիմում է գործի: Կոտրելու համար իր ռախաթի համառութիւնը, 1901 թ. նա փորձում է շրջակա սակավահող գիւղերին կապալով տալ հաղպատեցիների վարելահողերը:

Բայց մի աշխատավոր գիւղացի միւս աշխատա-



վորին չի կարող դավաճանել: Ռանչպարներին մեջ վոչ մի դավաճան չի գտնվում:

Այն ժամանակ Հաղպատի իշխանը դիմում է Սանահնի իշխան Արղութեանին և, վորպես առաջին փորձ, կապալով է տալիս նրան Դերևա գետի միւս լանջին գտնվող Աթոռիկ կոչված մոտ տասն օրավար հողը:

Իշխաններն իրենց հերթին կարծես դիտակցում են իրենց դասակարգային շահերի ընդհանրութիւնը:

Սանահնեցի կնեազ Նիկոլ Արղութեանը անցնում է գործի և ժողովում բավական հարուստ բերք Աթոռիկի կալերի շուրջը, բերում Սանահնից իր լծկանները և պատրաստվում կալ կալսել, երբ նախորեակի գիշերվա ժամը մոտ 12-ին մի անասելի հրավարութեամբ լուսավորվեց ամբողջ ձորը:

Նամարդ իշխան Արղութեանի ղեզերը և մարապներն այրվում էին...

Հիշում եմ, թե վորպիսի հպարտութեամբ ու «չարախնդութեամբ» դիտում էին հաղպատեցիները (ես այն ժամանակ գիւղումն էի) իր աղմուկով շրջակա գիւղերին լսելի այդ հրդեհը. — այրվում էին գիւղացիների տասնեակ տարիների ջանքերով կառուցած մարագները, գոմերը և գոմերում փակ մնացած իշխան Արղութեանի խեղդվող լծկանները, վորոնք սիրտ կտրատող ձայներ էին հանում: Հաղպատեցիները սրախոսութիւններ էին անում:

— Դե գնա, ա սանահնեցի Արգութինսկի, մագեամ քո ուխտն ինչ ա, վոր դու հաղպատեցու հողը վարես...

— Հը՛, ա Քոռոհանեցի, — հանաքներ էր անում հետս քեռիս վալուսը, — դագրանիցա էլա ըլճւմ ըսէ բաներ... էնտեղ էլ կնեազնին իրար օգնում ե՛ն:

— Երեւի ըլում ա, — միջամտում է գիւղի ամենից հասակավոր ու իր կեանքն ամբողջապես դառն աշխատանքի մեջ անցրած ծերունի Փերոզանց Արթենը — խի մարդիկ չե՛ն...

Օրվա հերոսները Խեչի-Դուռը կոչված սարից ժիւղանցա ձորով առանց գիւղ մտնելու անցել էին գիշերով աննկատ ու կատարել իրենց պարտքն ու դարձել ետ:



Նրանց անունները հայտնի էին մի քանիսին. — մէկը Մարութանց Խեչատուրը, մի փոքրիկ ու լղարիկ, վերին աստիճանի արագաքայլ՝ նույնիսկ ընդհանրապես արագաքայլ լոռեցիների մեջ, ճարպիկ ու խելոք գիւղացի. միւսը՝ բարձրահասակ ու գեղեցկատես երիտասարդ՝ Էվօանց Օսէփը: Հետեւեալ օրը Հաղպատ գիւղը թափվեցին պրիստավ ու չափար: Մեր ձորերում վոչ վոքի համար հանելուկ չէր, վոր հաղպատեցիների ձեռքի գործն էր այդ: Մագոյի դուքանում սկսվեց գործի քննութիւնը: Գիւղի տղամարդիկ խիստ հարցաքնութեան էին ենթարկվում. վոստիկանութիւնն առանձնապես հետաքրքրվում էր իմանալու, թե երիտասարդներից ով այդ պատմական գիշերը գիւղում չէր քնել...

Բարաթովի կատաղութեանը չափ ու սահման չկար: Նա այլևս չէր արժանացնում գիւղացիներին խոսակցութեան անգամ, չէր ուզում վորևէ գործ ունենալ Հաղպատի հետ և նշանակեց իրավաբան մի վայրենի կառավարիչ — Աբդուշելաշվիլուն, գիւղացիների հախից գալու:

1902 թվի աշնանացանն անցավ անվար, վորովհետև մովրավ Աբդուշելաշվիլին մերժեց տալ հողերը հաղպատեցիներին: Անվար անցավ նաև 1903 թ. գարնանացանը: Իշխանը՝ չէր ուզում զիջել և ընդհակառակն ամեն ճնշում գործ էր դնում չոքեցնելու իր առաջ գիւղացիներին: Նորին պայծառափայլութիւնը իր համալսարանական կառավարչի հետ չէին ամաչում դիմել նույնիսկ ամենաստոր խարդախութեան, ակնհայտ կեղծիքի:

Ծարդախ ու կեղծիք արարքներից մեկը առիթ ծառայեց զինված ընդհարումի, վոր վերջացավ արիւնոյ, բանտով, դատարանով:

Իշխանը ստացել էր 1902 թվի կապալը գիւղացիներից, բայց կլեառուղնի փաստաբանների օգնութեամբ ստանում է կատարողական թերթ (խաղոնիտելնի լիստ) գիւղի վրա՝ 1902 թվի իբրթե չվճարած կապալավարձի գանձման համար (մոտ 3.000 ռ.): Բարաթովի կառավարիչ Աբդուշելաշվիլին անցնում է գործի: Եվ մի գեղեցիկ օր, Հաղպատի գիւղացիների համար



միանգամայն անսպասելի կերպով, ուղեկցութեամբ Շուշավերի պրիստավ Մակրոպուլովի, սուգերնի-պրիստավ Ավալովի և չափարներին հաղթական մտնում է գիւղը և պահանջում մի անգամ արդեն վճարածը՝ երկրորդ անգամ:

Ինչ սքանչելի իլլիւստրացիա հին կարգերի դատարանի և վոստիկանութեան դասակարգային բնույթի:

Ձուր ապշած գիւացիները փորձում են ստացականները ձեռքին ապացուցել, թե իշխանին վոչինչ պարտ չեն, թե ամեն ինչ վճարված է վաղուց: Վոստիկանութիւնը առանց այդ բացատրութեան վրա ուշադրութիւն դառնելու ներս է խուժում խրճիթներն ու գոմերը և սկսում վեր գրել կահ կարասիքը ու քշել գոմերից տավարը:

Հատավ համբերութիւնն առանց այն էլ դառնացած ու վրդովված ռանչպարների: Լցված իրենց դատի ավելի քան արդարութեան գիտակցութեամբ, նրանք վորպես մի մարդ սեղմ շարքերով կանգնեցին պամեշչիկութեան այլանդակ արտոնութիւնները պաշտանող պրիստավ-չափարների դեմ: Առաջինները ուրիշ զենք չունէին, քան ռանչպարի եղանակը, բահեր և տավարածի դագանակներ. վերջինները կատարելագործված հրացան: Սակայն գիւղացութեան ցասումի առաջ անգոր էին փամփուշտները: Սպանված-վիրավորվածների արիւնն ավելի ևս վրձնական դարձրեց հաղպատեցիներին, վորոնք՝ ետ նվաճելով անարդարորեն խրճիթներից պոկած իրեղեններն ու գոմերից դուրս քաշած տավարը, ձորն ածեցին իշխանի կամակատար վոստիկանութիւնը, վորը հաղիվ հաղ կարողացավ փրկել իր գլուխը:

Գիւղացիներն ունեցան 8—9 զոհ. սպանվածների թվում գանվում էր մի ջահել հղի հարս—մեր Աղալոյի քույրը, ազգը չեմ յիշում:

Հաղպատեցիների այդ հանդգնութիւնը իր վրա րևեռեց Անդրկովկասի ցարական իշխանութեան ամբողջ ուշադրութիւնը: 1903 թիվն էր, գալիցիներն իշխանութեան ամենամուայլ և ամենակատաղի ժամանակ-



ները: Նա չէր կարող հանդուրժել, վոր Վելիկոռուսիայի մի սոսկ գաղութ—կոլոնիա համարված ծայրամասի գիւղացութիւնը սասանէր մասնավոր սեփականութեան նվիրականութիւնը, վարկաբեկէր իշխանական-ազնւատիրական ռեժիմի հեղինակութիւնը, պրեստիժը:

Ցարական սատրապների վրեժը սոսկալի էր ըմբոստ գիւղացիներին: Հաղպատ ուղարկվեց պատժիչ հարիւրակ, գիւղի վրա նշանակվեց էկզեկուցիա: Ամբողջ մի հարիւր վայրենի ու սանձարձակ կազակային վոհմակ իր ձիերով թափվեց գիւղը և նստեց առանց այն էլ տնտեսապէս ծայր աստիճան քայքայված գիւղացիների կրծքին: Կազակներն առաջին հերթին կալանավորեցին և բանտ վերածած գոմն ամեցին գիւղի դրեթե բոլոր տղամարդկանց, վերոնց մի այնպիսի «խրատական» ծեծի ենթարկեցին, վոր շատերն այնուհետև երկար ամիսներով մտան անկողին: Կազակների դազանութիւնը հասնում էր այն աստիճանի, վոր ամենայն առավոտ և երեկո ձիերի համար ջուր կրող բանտարկված գիւղացիներին մտրակի և հայհոյանքների տարափի տակ վազեցնում էին, հաճախ այդ ուղեկցող կազակներն ևս նստելով ջրով լիք վեդրոնները հազիվ քարշ տվող ծեծված ու քաղցած գիւղացիների շալակին:

Այսպիսի կոշմարային օրերից հետո—«գլխավորները», գիւղի ազգեցիկներից 15 հոգի ուղարկվեցին էտապով Թիֆլիս—Մետեխի բանտը: Ցարական ադմինիստրացիայի վրիժառութեանը չափ ու սահման չկար: Նա չէր ջոկում նույնիսկ իր տեսակետով «արդարին ու մեղավորին»: Այսպէս, Թիֆլիս աքսորվածների ու բանտարկվածների թվում գտնվում էին նաև չքավոր գիւղացութեան շահերի հետ վոչինչ ընդհանուր չունեցող և հին ռեժիմի տիպիք գլավրներինց մեկը՝ ամբողջ Լոռում քաջ հայտնի Գիգոլ Երզնկեանը, «Մոշուց բահրա ստացող» կուլակութեան գիտակից ներկայացուցիչ Շաքար բիձուռն (Երզնկեան), Հաղպատի ծխատեր քահանան—նույնպէս Երզնկեան—և այլ մի երկու կուլակ: Երզնկեանների ամբողջ հանցանքը կայանում էր նրանում, վոր նրանք վորպէս վոչ-սարուկ, «աղատ



գիւղացիներ», իրենց սեփական հողամասով ապրող և ուրեմն իշխանին բահրա ու արենդ չվճարող տարր՝ նիւթապես վոչ մի կերպ չպետք է տուժէին կատարողական թերթի ի կատար ածելուց: Մինչդեռ տգետ վոստիկանութիւնը՝ չափազանց շտապելով և կարծես նախադաշտով անհաճո դեպքերը, ժամանակ չէր գտնում «արդարին» ու «անարդարին» իրարից ջոկելու և Նրդնկեանների տավարն ևս խառնել էր միեւնույն ընդհանուր կաթսայի մեջ: Ինչ բնակաւորար գրագրել էր այդ սեփականատէր գիւղացիներին և պրիստովներին դեմ հանել:

Էկզեկուցիան տեւց ամիսներ: Կերվեցավ գիւղի ամբողջ ալաֆը — խոտը. քշված տավարից (իսկ տավարը այնուամենայնիվ քշվեց) առատորեն կերակրվում էին ցարական հնիչերիները: Իւղի, կարագի, ձվի, հալի, մեղրի և այլ պահանջները կրկնվում էին ամեն օր:

Ով ընդհանրապես գիտէ և ծանոթ է, մանավանդ մինչ 1905 թվի հեղափոխութեան ցարական օրերի կազակութեան համբավին, նրա համար դժվար չէ մի մտավոր գաղափար կազմել, թե ինչեր է տեսել 1903 թվի այդ սև օրերին Հաղպատի գիւղացութիւնը: Կենդանի վկաներ վորքան կուզէք կան գիւղում և անհրաժեշտ է, վոր Խորհրդային Հայաստանի Իստպարտը ամենայն մանրակրկտութեամբ ժողովի այդ արիւնոտ անցքերին վերաբերեալ վկայութիւնները:

Բանտարկվածները Մետեխում մնացին — եթե հիշողութիւնս ինձ չէ դավաճանում — մոտ ինն ամիս: Ապա թողին նրանց պրավականներով (1.500 ռ. մինչեւ 3000 ռ. իւրաքանչիւրի համար) և հանձնեցին դրանց և գիւղից շատ-շատերի (վորոնք չէին բանտարկվել) գործը Թիֆլիսի Նահանգական Դատարանին: Վատ չէր լինի նույնպես, վոր «ազրարային անկարգութիւնների» այդ հետաքրքիր գործը ստացվէր Թիֆլիսի դատական արխիվից և հանձնվէր Խորհրդային Հայաստանի Իստպարտին:

Պետք է այստեղ արձանագրել նույնպես, վոր բանտից հաղիվ ազատված խեղճ գիւղացիները նորից ընկան մի անբարեխիղճ փաստաբանի — հասարակական

11  
35845

Wing

Wing

9650/1-93/1-0 000



գործչի ու գրականագետի հավակնութիւն ունեցող երգ-  
վեալ-հավատարմատար Տիգրան Հովհաննիսեանի ձեռ-  
քը, վոր վոչ միայն մազաչափ անգամ չոգնեց հաղպա-  
տեցիներին, այլ միանգամայն գուր կորոյեց նրանցից  
կոպեկ-կոպեկ ժողոված մոտ 600 ուրլին ու խժոնց:

Գործը դատարանում կարճվեց. վրա հասավ ցա-  
րական ինչոր մանիֆեստ: Պարզ երևում էր, վոր պո-  
մեշչիկ-չինովնիկների դատարանը խուսափում էր հրա-  
պարակի վրա դնել «ագրարային անկարգութիւնների»  
գործը շատ հասկանալի պատճառով: Մեղադրեալներից  
շատ ավելի ուրախ էին ցարական ադմինիստրացիան ու  
դատարանը, վոր անհարմարութիւնից հանեց նրանց  
փափկանկատ մանիֆեստը:

Բայց վոչ ծեծը, վոչ բանտը, վոչ արիւնը չկոտրե-  
ցին Հաղպատի ոանչպարութեան հեղափոխական վոգին,  
կովելու եռանդը: Մեզ ապացույց նրա հետագա քա-  
ղաքական ամբողջ կեանքը:

\* \*  
\*

Անցել է ուղիղ քսան տարի բոլշեիկ Հաղպատի  
այդ արիւնոտ անցքերից, վորոնք տեղական նշանակու-  
թեան շրջանակներից դուրս էին: Հեղափոխական էմի-  
գրացիայի մամուլը հեռավոր ժընկում («Իսկրա»-ում)  
արձանագրեց այն՝ վորպես Անդրկովկասի գիւղական  
մասսաների գիտակցութեան արթնացման սիմպտոմնե-  
ից մեկը, հեղափոխութեան ճանապարհը բռնելու մի  
ակնհայտ ապացույց:

Այդ խիզախ դեպքերից հետո ամբողջ երկու տաս-  
նեակ տարիների ընթացքում Հաղպատ գիւղը չի թե-  
րացել իր հեղափոխական պարտականութիւնների մեջ  
և հայ բոլոր գիւղերի մեջ—առանց մազաչափ անգամ  
չափազանցնելու կարելի է պնդել—նա եղել է հե-  
ղափոխական տեսակետից՝ ամենից տոկուն, համառ ու  
հանդուգն գիւղը, վոր ոէակցիայի ամենամուայլ օրե-  
րին անգամ չի ծածկել իր ըմբոստ դեմքը, վորի հայ-  
եացքներին հանդիպելուց շատ հաճախ խուսափել է  
պարզապէս ամեն գույնի վոստիկանութիւն: Գաղտնիք  
չէ եղել վոչ վոքի և մանավանդ իշխանութեան համար,  
վոր Հաղպատն ավելի քան անբարեհույս գիւղ է: Ամ-



բողջ Լոռում և Բորչալի թիւրք գիւղացութեան մեջ նրա անունը տասնեակ տարիներ սինոնիմ է եղել ուղղակի բոլշևիկ անունին, ասել հաղապատեցի եմ—միևնույն է եղել թե ասել՝ բոլշևիկ եմ:

Ահա շրջակայքի վրա իր բոլշևիկութեամբ շատ անգամ ահ ու սարսափ ազդող այդ գիւղի ամբողջ տրագիցիան:

Անդրկովկասում ընդհանրապես դժվար թե մի անկիւն լինի, վորտեղ մեզ ամենիս քաջ հայտնի կեղծ-սոցիալիստները փորձած չլինեն իրենց վոչ-պակաս կեղծ քարոզներով շահելու բանվորութեան և գիւղացութեան վստահութիւնը: Շատ տեղերում նրանց աջողվել էր պատճառ աշխատավորութեան գիտակցութիւնը ամուր ցանցերով, վորոնցից ազատվելու համար անհրաժեշտ էր հոկտեմբերեան հեղափոխութեան ցնցումը:

Լոռում ևս մենշևիզմն ու Դաշնակցութիւնը շատ են աշխատել և աշխատել տարիներ իրենց լավագոյն ույժերի միջոցով, նվաճելու այդ լեռնոտ ու աղատասեր գավառի մարտիկ գիւղացութեան միտքն ու սիրտը: Սակայն զուր: Լոռում վորեւ հենարան ստեղծելու նրանց շուայլած եռանդն ու աշխատանքը չտվին ամենաշնչին արդիւնքն անգամ: Դերեւի ձորերի գիւղացին խուլ է եղել դեպի կեղծ-սոցիալիստների խոստումները, արհամարհել է նրանց սպառնալիքները և չի ընկճվել նույնիսկ այն ժամանակ, երբ մենշևիկը նստած Սադախլոյում, իսկ դաշնակը Քեռլագերանում, դանակը Լոռվա գիւղացութեան բկին դրած՝ թույլ չէին տալիս մի քանի ֆունտ հացահատիկ կամ ալիւր տանել քաղցից ընկնող իր ընտանիքի համար: Մենշևիկ-դաշնակի երկամեա բռնկադան անգամ չսպանեց հեղափոխական կորովն այդ շրջանի տանջված ռանչաբութեան մեջ՝ երբ այսպես կոչված «Լոռվա անտեր զոնա» էր և մենշևիկ-դաշնակ պրիստամիւսների քմահաճույքին էլ չափ ու սահման չկար այդ երկրում:

Ուշագրութեան արժանի է մի այլ պարագա ևս: Լոռին տվել է դաշնակցական և մենշևիկեան ինտելլիգենցիայի տիպիք ներկայացուցիչներ: Առանձնապես Դաշնակցութեան վերաբերմամբ պետք է նկատենք, վոր



այդ գավառից դուրս է եկել նրա գուցե ամենից հեղինակավոր ու գաղափարական գործիչը—Սիմոն Զավարեան, վորը՝ իբրև մի վերին աստիճանի բարեխիղճ ու պատրաստի գիւղատնտես՝ իր պատական խորհուրդներով շատ օգնութիւններ է տվել Լոռվա ոանչպարին, և վորպես մի պարզ ու մատչելի մարդ անհատապես ահագին հարգանք է վայելել մեր ձորերի գիւղերում: Բայց շեֆի տեղական ծագումը եւ անձնական անուրանալի բարեմասնութիւնները չեն օգնել դաշնակ կուսակցութեան Լոռվա գիւղացութեան սերը գեթ մի օրով շահելու քաղաքականապես:

Լոռվա ոանչպարը միշտ և ամենուրեք օրգանապես ատել է Դաշնակցութիւնը, վորպես Անդրկովկասի ժողովուրդների, մասնավորապես հայ և թուրք գիւղացիների անդորրութեան վրդովողի, նրանց անկեղծ դրացիութեան և եղբայրական գործակցութեան երդվեալ թշնամու: Նա վոչ-պակաս ուժեղ ատել է մենշևիկութիւնը, վորի դասակարգային կռիւ մեթոդներին նա շարունակ վերաբերվել է ավելի քան թերահավատութեամբ:

Քանի ավելի ուժեղացել է ճշումը հակա-հեղափոխական պրիստամիւսերի ու չինովնիկների կողմից, այնքան ավելի ամպրապնդվել է Լոռվա գիւղացութեան մեջ ատելութիւնը դեպի մենշևիկն ու դաշնակը:

Սերը գեպի բոլշևիկմը սոսկ պլատոնական չէ եղել Լոռում:

50—60 գիւղ ունեցող այդ անկիւնում Հայաստանի խորհրդայնացման նախորեակին մենք ունեցել ենք շատ ավելի ուժեղ ու կազմակերպ գինավորական նեցուկներ, լայն ու խոր տարածված կուսակցական ցանցեր, քան դաշնակցական Հայաստանի բոլոր գավառներում միասին վերցրած:

Եւ հետագա վճռական դեպքերը դաշնակ-մենշևիկեան ուժերի դեմ միանգամայն արդարացրին Լոռվա գիւղացութեան հեղափոխական համբավը:

Ահա այդպիսի մի բոլշևիկ գավառի ամենից բոլշևիկ գիւղի՝ հայ գիւղացութեան հեղափոխական պատ-



մութիան մեջ բացառիկ փայլուն էջ կազմող արիւնտ աւերակների քսան տարին լրանալու վրա է:

Չպետք է թույլ տալ, վոր մոռացութեան փռշին ծածկի ցարիզմի և սեփականատիրութեան դեմ ուղղված ագրարային շարժման այդ ուսանելի անցքերը: Մենք պարտավոր ենք զոնե քսանամեակին լայն կերպով ցուցադրել այն իսկապես հեղափոխական հերոսութիւնը, վոր մի ուրախալի բացառութիւն է մտցրել ամբողջ հայ գիւղացութեան ազգամիջեան վիճերով ու կոտորածներով ի անցեալ խայտառակ և ճգճիմ պատմութեան մեջ: Պետք է ցույց տալ, վոր նույնիսկ հայ աանչպարը — երբ անգոր են եղել նրան խանգարել մենշեիկ ու դաշնակ կուսակցութիւնները — բէակցիայի ամենաասանձարձակ օրերին իսկ ունեցել է դասակարգային այնպիսի արթնացումներ, վոր պատիւ կարող է բերել հեղափոխական գիւղացութեան շարժմանն ընդհանրապես և ամբողջ հայ աշխատավոր գիւղացութեանը մասնավորապես:

Չպետք է մոռանալ նույնպես, վոր Լոռվա ագրարային այդ հեղափոխական պայքարն ու բռնկումը — վոր ծայր է տվել 1901 թվին Աթոռիկի դեղերը այրվելու հետ, տեւել է տարիներ և հանգել 1903 թվի հոկտեմբերի արիւնալի դեպքերին — ինքնաբոլիս էր և անդրանիկը ամբողջ Անդրկովկասում:

Փառք և պատիւ կարմիր Լոռվա բոլշեիկ գիւղ Հաղպատին՝ հեղափոխական այդ մեծ բռնկումի քսանամեակի օրերին:





ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՒ ԵՒ ՍՈՒՐԷՆԻ ԼՈՒՅՍ ԵՆՏԵՍԵԼ

Թ Ի Ֆ Լ Ի Ս ՈՒ Մ

(Հրահարակութիւններ՝ «Սոցիալիստական հրահար.», «Եր-  
րորդ ինտերնացիոնալ», «Պրոլետարիատ», «Պրոլետարական  
միտք», «Երիտ», «Կոմմունիստի գրադարան», «Կարմիր  
ռանչպարի գրադարան», «Բանվորուհու գրադարան»,  
«Պրոֆսիուրեան գրադարան», «Սարօ-Մարօ» եւ այլն)

Լ. Հ Ա Յ Ե Ր Է Ն Լ Ե Ձ Վ Ո Վ

1. Կարլ Մարքսի հիշատակին
2. Ե. Սուրէն—Բանվորի գիրքը
3. «Բանվոր» ամսագիր № 1
4. «Բանվոր» ամսագիր № 2
5. Պօլ Լաֆարգ — Դեպի սոցիալիզմի թագավորու-  
թիւնը
6. Ֆր. Էնգելս—Կոմմունիզմի սկզբունքները
7. Ն. Բուխարին — Կոմմունիստներ (բոլշեւիկներ)
- ծրագիրը
8. Ի. Ստեպանով—Ժան Պոլ Մարատ
9. Ն. Լենին—Բուրժուական եւ պրոլետարական դե-  
մոկրատիա
10. Ն. Լենին—Միջին գիւղացիութեան մասին
11. Կոմմունիստական կուսակցութեան ծրագիրը
12. Կոմմունիստական Ինտերնացիոնալի մտնիֆեստը
13. Կոմմունիստական Ինտերնացիոնալի պլատֆորման
14. Մ. Գորկիյ—Ժողովրդին եւ ինտելիգենցիային
15. Ա. Լուսաչարովի—Հեղափոխութիւնը եւ դատարանը
16. Ստալին—Խորհրդային Իշխանութեան ազգային քա-  
ղաքականութիւնը
17. Պրոլետարական պոեզիա
18. «Երինտ» (Երրորդ Ինտերնաց.) ժողովածու, տետր I
19. «Երինտ» ժողովածու, տետր II
20. «Երինտ» ժողովածու, տետր III
21. Երրորդ Ինտերնացիոնալի կանոնադրութիւնը



22. Լօռվայ նեյտրալ զոնի գիւղացիական պատգամավորների խորհրդի (1919 թ.) արձանագրութիւնները — գիրք I
23. Լօռվայ նեյտրալ զոնի գիւղացիական խորհրդի (1920 թ.) արձանագրութիւնները — գիրք II
24. Ալ. Մարտունի — Երրորդ Կոմմունիստական Ինտերնացիոնալը
25. Կոմմունիստական Ինտերնացիոնալ — Ժողովածու
26. Ն. Բուխարին և Ե. Պրեդերաժնսկիյ — Կոմմունիզմի այբուբենը
27. Ն. Լենին — «Չախութեան» երեխայական հիվանդութիւնը Կոմմունիզմի մէջ
28. Վ. Կերժենցեւ — Մայսի 1-ը և համաշխարհային հեղափոխութիւնը
29. Վ. Նեվսկի — Վ. Ի. Ուլիանով-Լենին
30. Գիւղատնտեսական Կոմունաներ
31. Գիւղում աշխատելու հրահանգներ
32. Բլոնինա — Բանվորուհիները ինտերնացիոնալի մէջ
33. Ա. Կալանտայ — Ընտանիքը և Կոմմունիստական պետութիւնը
34. Ն. Լենին — Խորհրդային իշխանութիւնը և բանվորուհին
35. Պրոֆիտութիւնների 4-րդ Համառուսական համագումարի բանձները և վորոշումները
36. Կոմմունիստական Կուսակցութեան ծրագիրը — 2-րդ տպագր.
37. Հ. Հակոբեան — Կարմիր ալիք
38. «Լօռվա գիւղացութեան ձայնը» № № 1, 2, 3, 4, 5
39. «Կարմիր Աստղ» № № 1, 2, 3, 4, 5. (մենշեւիկների օրոք)
40. «Կարմիր Ռանչպար» № № 1, 2, 3
41. «Կարմիր օրեր» № № 1, 2, 3, 4, 5, 6
42. «Արեւմտահայ բանվոր-գիւղացիութիւն» № № 1, 2
43. «Արեւմտահայ Չայն» № 1 և № 3
44. Ե. Սուրէն Գրական քննական հոգովածներ  
II. Վ Ր Ա Յ Ե Ր Է Ն Լ Ե Չ Վ Ո Վ
45. Կոմմունիստական Ինտերնացիոնալի մանիֆեստը
46. Կոմմունիստական Ինտերնացիոնալի պլատֆորման



47. Ն. Լենին — Բուրժուական և պրոլետարական դեմոկրատիա

48. Հոգի մասին (Թեղիսյան)

49 Պրոլետարական պոեզիա

### III. Թ Ո Ւ Ր Ք Ե Ր Ե Ն Լ Ե Չ Վ Ո Վ

50) Կոմմունիստական Ինտերնացիոնալի պատգամներ

### IV. Թ Ո Ւ Ս Ե Ր Ե Ն Լ Ե Չ Վ Ո Վ

51. Пролетарское творчество

52. Пролетарская Культура I

53. Пролетарская культура II

54. Пролетарская культура III

55. Народное хозяйство I

56. Народное хозяйство II

57. Трудовая школа

58. Вестник труда

59. Советская медицина

60. Пролетарская поэзия--2-ое изд.

61. Н. Ленин—Буржуазная и пролетар. демократия

62. И. Степанов—От рабочего контроля к рабочему управлению

63. Г. Устинов — Меньшевики, эс-эры и контр-революция

64. Н. Ленин—О среднем крестьянстве

65. А. Луначарский—Революция и суд

66. М. Горький—Народу и интеллигенции

67. Н. Бухарин—Программа коммунистов (большевиков)

68. Н. Ленин—Письмо к американским рабочим

69. Манифест Коммунистического Интернационала

70. Платформа Коммунистическ. Интернационала

71. Н. Оссиянский—О едином революционном фронте

72. П. Стучка—Новый суд

73. Н. Оссиянский—Предпосылки социалистической революции

